ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՑԻ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Նոր տարվա առթիվ ճանեցեք ընդունել, մեծահարգ Նախագահ, Մեր անկեղծ շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները:

Մաղթում ենք Ձեզ անձամբ և մեր բարեխնամ կառավարության բոլոր անդամներին հաջառաղջություն և Ձեր հայրենաշեն գործոց հաջողություն: Թող ասաջիկա տարին լինի Մայր Հայրենիքի և Սովետական մեծ Միության համար նոր վերելքի, բարօրության և երջանկության տարի, համայն աշխարհի խաղաղությամբ:

Օրհնությամբ՝
ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՔՈՋԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հանեցեք ընդունել Մեր ջերմ շնորհավորանքները նոր տարվա առթիվ:

Աղոթում ենք Ձեզ անձամբ և մեր բարեխնամ կառավարության բոլոր անդամներին հաջողություն և նայրենանվեր շինարար գործոց հաջողություն: Մնում ենք միշտ աղոթող մեր վերածնված Մայր Հայրենիքի ծաղկման, սովետական եղբայրական ժողովուրդների բարգավաճման և ամբողջ աշխարհի խաղաղության համար:

Օրհնությամբ՝
ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ա. Ա. ՊՈՒԶԻՆԻՆ

ՄՈՍԿՎԱ

Հանեցեք ընդունել Մեր անկեղծ շնորհավորանքները ու բարեմաղթությունները նոր տարվա առթիվ:

Ջերմապես աղոթում ենք առ Աստված, որպեսզի գալիք նոր տարին լինի սովետական ժողովուրդների համար խաղաղության, բարգավաճման և երջանկության տարի, Սովետական Միության նոր ծաղկման տարի, ամբողջ աշխարհում կայուն խաղաղության տարի:

Օրհնությամբ՝
ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆՅԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Նոր տարվա առթիվ հանեցեք ընդունել Մեր և Մայր Աթոռի ամբողջ միաբանության ջերմագին շնորհավորանքները անձամբ Ձեզ և պատվարժան խորհրդի բոլոր անդամներին:

Աղոթում ենք առ Աստված, որ 1962 թվականը լինի մեր երկրի ու մեր ժողովրդի առավել բարգավաճման և խաղաղության տարի:

Օրհնությամբ՝
ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում նոր տարվա առթիվ Ձեր շնորհավորանքի և ամբողջ աշխարհի ժողովուրդների տևական խաղաղության բարեմաղթությունների համար:

Ջերմորեն շնորհավորելով Ձեր նոր տարին, ցանկանում եմ Ձեզ առողջություն և բարեկեցություն:

Շ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում նոր տարվա Ձեր շնորհավորանքի և բարեմաղթությունների համար:

Ջերմորեն շնորհավորելով Ձեր նոր տարին, ցանկանում եմ Ձեզ առողջություն և բարեկեցություն:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ
ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեր նոր տարին: Թող նոր տարին լինի սովետական ժողովրդի և ամբողջ մարդկության խաղաղության տարի:

Ձեր առողջության և բարեկեցության լավագույն ցանկություններով՝

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ